

Մեթոդաբանական պարզաբանումներ

Իրավական համակարգը

- 1) «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ընդունվել է 04.04.2000թ.),
- 2) «Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը» (ընդունվել է 19.12.2012թ.),
- 3) «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ընդունվել է 27.11.2008թ.),
- 4) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները (2013 թվականի ապրիլի 25-ի թիվ 402-Ն և 2013 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 1054-Ն),
- 5) Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի որոշումները և իրավական այլ ակտեր:

Հաշվառումը

Համաձայն գործող միջազգային մեթոդաբանության **գյուղատնտեսական համատարած հաշվառումն (ԳՀՀ) իրենից ներկայացնում է գյուղատնտեսության կառուցվածքի վերաբերյալ համընդգրկուն տվյալների հավաքագրման վիճակագրական գործառնություն:**

Նպատակները

- 1) գյուղատնտեսության կառուցվածքի՝ *գյուղատնտեսական նշանակության հողեր, գյուղատնտեսական կենդանիների զլխաքանակ, գյուղատնտեսական տեխնիկա, գյուղատնտեսական նշանակության շինություններ, առկա ներուժի՝ մարդկային, նյութական և դրա օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը՝ հանրապետության, մարզային և համայնքային կտրվածքով,*
- 2) գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների հաշվառման ամբողջական համակարգի ձևավորումը,
- 3) գյուղատնտեսությամբ զբաղվող անհատական (գյուղաբնակ և քաղաքաբնակ) տնային տնտեսությունների վիճակագրական ռեգիստրի ձևավորումը,
- 4) միջազգային վիճակագրական տվյալների հետ համադրելիության ապահովումը:

Հաշվառման միավորները

Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ միավորներն են՝ *անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունները, գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքաբնակների անհատական տնտեսությունները, այգեգործական ընկերակցությունների անդամների անհատական տնտեսությունները, համայնքները, գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, խմբային տնտեսությունները (քրեակատարողական հիմնարկներ, գորամասեր, ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, ուսումնական հաստատություններ, գիտափորձարարական ստորաբաժանումներ):*

Գյուղատնտեսական համատարած հաշվառման տեսանկյունից դիտարկվել են այն միավորները, որոնք իրականացրել են գյուղատնտեսական գործունեության հետևյալ

տեսակները (անկախ այն հանգամանքից, թե գյուղատնտեսական գործունեությունը նրանց համար հանդիսանում է հիմնական, թե երկրորդական գործունեություն)։

- գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցում (հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր, տեխնիկական մշակաբույսեր, կարտոֆիլ, բանջարանոցային մշակաբույսեր, բոստանային մշակաբույսեր, կերային մշակաբույսեր, պտուղ և հատապտուղ, խաղող),
- ծաղիկների, սնկերի, տնկիների, սածիլների և այլնի աճեցում,
- գյուղատնտեսական կենդանիների և թռչունների վերարտադրություն,
- բուսաբուծական և անասնաբուծական արտադրանքի արտադրություն,
- գյուղատնտեսական հողերը գյուղատնտեսական և բնապահպանական բարենպաստ պայմաններում պահելու հետ կապված գործունեություն,
- և այլն։

Գյուղատնտեսական համատարած հաշվառման տեսանկյունից չեն դիտարկվել այն միավորները, որոնք ունեն միայն.

- ախոռներ, ձիարշավության համար նախատեսված տարածքներ,
- սպանդանոցներ կամ կենդանիների վաճառակետեր։

Չեն դիտարկվել նաև այն միավորները, որոնք զբաղվել են միայն.

- որսորդությամբ և անտառային տնտեսությամբ։

Հաշվառման գործընթացը


Տվյալների հավաքագրումն իրականացվել է հետևյալ եղանակներով.

- անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններ - համատարած, հարցաթերթի լրացում հաշվարարների կողմից հարցման միջոցով («ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ 1-ԳՀՀ ՀԱՐՑԱԹԵՐԹ»),
- գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքաբնակների և այգեգործական ընկերակցությունների անդամների անհատական տնտեսություններ - ընտրանքային, հարցաթերթի լրացում հաշվարարների կողմից հարցման միջոցով («ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ 1-ԳՀՀ ՀԱՐՑԱԹԵՐԹ»),
- համայնքներ - համատարած, հարցաթերթի ինքնուրույն լրացում համայնքի ղեկավարի կողմից («ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ 2-ԳՀՀ ՀԱՐՑԱԹԵՐԹ»),
- գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր և խմբային տնտեսություններ - համատարած, հարցաթերթի ինքնուրույն լրացում համապատասխան պաշտոնատար անձի կողմից («ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿՎԱՏԵՐԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ 3-ԳՀՀ ՀԱՐՑԱԹԵՐԹ»)։


**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ (ԳՀՀ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ
(ԳՀՀ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՄՓՈՓՄԱՆ
5 ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (I-V))**

**V ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ (ՀՀ ԱՎԾ)
ԳՀՀ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**


**IV ՀՀ ԱՎԾ ք. Երևանի և մարզային
գործակալություններ**




III ԳՀՀ տեղամասեր



**II Հրահանգչական
տեղամասեր**



**I Հաշվային
տեղամասեր**



**Հայ Առաքելական Եկեղեցի
Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի
ֆինանսական բաժին**

**Իրավաբանական
անձինք**

**Անհատական
(ցյուրացիական)
տնային
տնտեսություններ**

**Գյուղատնտեսությամբ
գրավող
քաղաքայինների
անհատական
տնտեսություններ**

**Այգեգործական
ընկերակցությունների
անդամների
տնտեսություններ**

**Անհատ
ձեռնարկատերեր**

**Խմբային
տնտեսություններ**
 •Քրեակատարողական հիմնարկներ
 •Զորամասեր
 •Մանկատներ
 •Ծերերի և հաշմանդամների
 սոցիալական սպասարկման
 կազմակերպություններ
 •Ուսումնական հաստատություններ
 •Գիտա-փորձարարական
 ստորաբաժանումներ

•ՀՀ արդարադատության
նախարարություն
 •ՀՀ պաշտպանության
նախարարություն
 •ՀՀ աշխատանքի և
 սոցիալական հարցերի
 նախարարություն
 •ՀՀ կրթության և գիտության
 նախարարություն

Հավաքագրված ցուցանիշները

- գյուղատնտեսական նշանակության հողեր,
- վարելահողեր,
- բազմամյա տնկարկներ,
- խոտհարքներ,
- արոտավայրեր,
- տնամերձ հողեր,
- գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածություններ,
- փաստացի ոռոգված հողեր,
- բույսերի պաշտպանության միջոցներ և պարարտանյութեր,
- գյուղատնտեսական կենդանիներ և թռչուններ,
- գյուղատնտեսական նշանակության շենքեր ու շինություններ, տեխնիկական միջոցներ և սարքավորումներ,
- աշխատուժ,
- գյուղատնտեսական արտադրանքի օգտագործում և վերամշակում,
- ագրոտորիզմ,
- վարկեր և սուբսիդիաներ,
- գյուղատնտեսական կոոպերացիա,
- այլ:

Ցուցանիշների խմբավորումը

- ըստ տնտեսությունների իրավական կարգավիճակի՝ ֆիզիկական և իրավաբանական անձերի,
- ըստ գյուղատնտեսական նշանակության հողերի չափաբաժինների,
- ըստ գյուղատնտեսական կենդանիների և թռչունների գլխաքանակի և սեռահասակային խմբերի,
- ըստ փաստացի ոռոգված հողերի, ոռոգման աղբյուրների և մեթոդների,
- ըստ գյուղատնտեսական արտադրանքի իրացման ուղղությունների,
- ըստ աշխատուժի սեռային բաշխվածության,
- և այլն:

Հաշվառման ժամանակահատվածը

Հայաստանի Հանրապետությունում համաձայն ՀՀ ԳՀՀ օրենքի այն պետք է իրականացվի տասը տարին մեկ:

Առաջին ԳՀՀ ՀՀ-ում անց է կացվել 2014 թվականի հոկտեմբերի 11-31-ը ներառյալ:

Ցուցանիշները բնութագրող ժամանակահատվածը.

2014թ. հոկտեմբերի 10-ի դրությամբ՝

- գյուղատնտեսական հողատեսքերը,
- բազմամյա տնկարկների տարածությունները,
- գյուղատնտեսական կենդանիների և թռչունների գլխաքանակը,
- գյուղատնտեսական կենդանիներ ու թռչուններ պահելու և գյուղատնտեսական արտադրանք պահպանելու համար շենք/շինությունների առկայությունը,
- սարքին վիճակում սեփական գյուղատնտեսական տեխնիկայի / սարքավորման առկայությունը:

01.08.2013 - 31.07.2014 հաշվետու ժամանակահատվածի համար՝

- գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները,
- բազմամյա տնկարկների փաստացի ոռոգված տարածությունները,
- հողերի ոռոգման աղբյուրները և մեթոդները,
- բույսերի պաշտպանության միջոցները և պարարտանյութերը,
- ձկնաբուծություն,
- գյուղատնտեսական տեխնիկայի/սարքավորումների օգտագործումը,
- գյուղատնտեսական աշխատանքների համար ձիու կամ այլ կենդանի բանող ուժի օգտագործումը:

11.10.2013 - 10.10.2014 ժամանակահատվածի համար՝

- գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների պահպանման համար շենք/շինությունների առկայությունը,
- աշխատուժի սեռը, տարիքը, տնտեսությունում գյուղատնտեսությամբ զբաղվածությունը, կրթական մակարդակը,
- տնտեսության գլխավորի և այլ անդամների գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ վերապատրաստման դասընթացների մասնակցությունը,
- գյուղատնտեսական աշխատանքներում տնտեսության անդամների (աշխատողների) ընդգրկվածությունը,
- գյուղատնտեսական արտադրանքի օգտագործումը և վերամշակումը,
- վերամշակված արտադրանքի վաճառքը,
- տնտեսությունների կողմից ագրոտուրիզմի ծառայությունների մատուցումը,
- գյուղատնտեսական նպատակով ստացված վարկերի և սուբսիդիաների աղբյուրները,
- գյուղատնտեսական կոոպերատիվի անդամ հանդիսանալը,
- գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և կատարած ծախսերի վերաբերյալ տնտեսության ներտնտեսային հաշվառում վարելը:

Պայմանական նշաններ

Երևույթը բացակայում է	-
Չնչին մեծություն	0.0
Ցուցանիշը չի հաշվարկվում	×

Արդյունքների տարածումը

<<Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները>>՝ թղթային և էլեկտրոնային եղանակներով (*ՀՀ ԱՎԾ կայքէջ՝ <http://www.armstat.am>*):

<<Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները մարզերով>> էլեկտրոնային եղանակով (*ՀՀ ԱՎԾ կայքէջ՝ <http://www.armstat.am>*):